ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԱՐԱՑԻԱՅԻ ԱԶԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ

Հ II 24280 4409

Հաստատված է Համարդկոոպխորհրդի և Համարդանտառկոոպմիության հետ և հաստատված է Համարդկոոպդանձխորհրդի նախագահության կողմից 10 հունիսի 1937 թվի։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ

Ամենորյա և կոնկրետ հսկողության միջոցով աշխատանքի պաշտպանության որենքները, տեխ. անվտանգության և արդյունաբերական սանիտարիայի միջոցառումները արտելականների կյանքում կիրառելու, բանվորական լայն մասսաներին աշխատանքի պաշտպանության գործում ներգրավելու համար Արդկոոպերացիայի ամեն մի արտադրական կետում, պետք է առանձնացված լինի աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչներ։

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԸ

1. Հասարակական տեսուչներն ընտրվում են Արտկոոպերացիայի արտելներում ամենալավ ակտիվ աշխատողներից, արտելի ընդհանուր ժողովում, կամավոր կարգով և մեկ տարի ժամանակով։

Այն սանձինք, որոնք զբաղվում են վարչատնտեսական գործով և վարչա-տեխնիկական պերսոնալի այն աշխատանքները, որոնք առանձնացած են վարչության կողմից աշխատանքի պաշտպանության տեխնիկայի անվտանգության միջոցառումները կիրառելու համար, չեն կարող ընտրվել հասարակական տեսուչներ։

2. Աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչներն առանձնացվում են արտելի և պրոմկոլխոզի ամեն մի կետում առանձին։

3. Այն արտադրությունը, որտեղ աշխատում են 50-ից ավել անդամներ, ընտրում են այնքան քանակով աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչներ, որով ապահովված լինի ամեն մի արհեստանոցի խոշոր ցեխերը և հերթափոխությունները։

Ցերկու կամ մի քանի աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչներ ունեցող արտելների աշխատանքի պաշտպանության և կենցաղը բարելավող բյուրոների նախագահները հանդիսանում են ավագ հասարակական տեսուչներ, իրագործելով մնացած հասարակական տեսուչների ղեկավարման աշխատանքները։

4. Այն արտելականները, որոնք տանում են հասարակական տեսուչների պարտականությունները, նրանց կրճատելը կամ այլ հիմնարկ փոխադրվելը կատարվում է միայն ԱՊԿԲՌ-ի, կամ Արդկոոպգանձարկղի համաձայնությամբ։

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ

5. Ժողովրդի թշնամիները՝ տրոցկիստական-բուխարինյան թափթփուկները, ֆաշիստների ագենտները, լրտեսները և դիվերսանտները ոգտվում են ամեն տեսակի ձևերից, որպեսզի ջնասեն մեզ, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի բնագավառում։ Նրանք փչացնում են սարքավորումները—գազգյահները և մեքենաները, կազմակերպում են արտադրության մեջ ավարիաներ այնպես, որպեսզի լքեն արտադրության նորմալ աշխատանքները, բարձրացնում են տրավմատիզմը և դժբախտ դեպքերը արտելներում։

Աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչները պարտավոր են ուժեղացնել բոլշևիկյան զգոնու-

թյունը աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի գործում, վորպեսզի թույլ չտան արտելներում խծկվել ժողովրդի թշնամիներին, մերկացնել նրանց մախինացիան և շտապ հանձնել դատախազական մարմիններին։

Հասարակական տեսուչներն իրենց ձեռնարկության սահմաններում պարտավոր են՝

ա) Հսկել լրիվ և ժամանակին կիրառելու կյանքում բոլոր այն որենքները, վորոնք պարտադիր են Արդյունաբերական Կոոպերացիայի ցանցի համար և նույնպես աշխատանքի պաշտպանության ու անվտանգության տեխնիկայի վերաբերյալ ներքին կարգապահության բոլոր կանոնները։

բ) Ծանոթացնել արտելականներին անվտանգության տեխնիկայի և Արդյունաբերական սանիտարիայի գործող կանոններին, ներգրավելով այդ աշխատանքներում նույն արտադրության ճարտարապետա-տեխնիկական պերսոնալին և շրջանային ու միջ. շրջանային դանձարկղի աշխատողներին։

գ) Հետևել ճիշտ և ժամանակին ստանալու և ոգտագործելու արտահագուստն ու պաշտպանության պիտույքները և հետևել ժամանակին ու լրիվ ձեռք բերելու այդ պիսինները։

դ) Մասնակցել աշխատանքի պաշտպանության պլանի մշակման ու այդ նպատակների ծախսերի նախահաշիվների կազման աշխատանքներին, նպատակ դնելով այդ ծախքերը մտցնելու արտելի պրոմֆինպլանի մեջ և ճիշտ նպատակին, լրիվ ու ռացիոնալ կերպով ոգտագործելու համար։

յե) Դժբախտ դեպքերի ճիշտ հաշվառման և նրանց պատճառների ուսումնասիրման ու վերացման միջոցով պայքարել դժբախտ պատահարների ու հիվանդությունների դեմ։

գ) Աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի ու արտադրական սանիտարիայի գործը լավ հիմքերի վրա դնելու տեսանկյունով, կազմակերպել սոցիալիստական մրցության գործը արտելի բոլոր անդամների մեջ։

ե) Աշխատանքի պայմանների բարելավման ու անվտանգության տեխնիկայի խնդիրները լավ հիմքերի վրա դնելու տեսանկյունով, կազմակերպել բանվորների առաջարկների հավաք։

6. Աշխատանքի պաշտպանության հասարակական տեսուչն իր պարտականությունները կատարում է աշխատանքի ազատ ժամերին, հասարակական կարգով, սակայն նրանք հնարավորության սահմաններում մաքսիմալ չափով ազատվում են մյուս հասարակական աշխատանքներից։

7. Իրեն վրա դրած պարտականությունների իրականացման համար հասարակական տեսուչը, իրեն արտադրական կետերի սահմաններում կազմակերպում է՝

ա) Անց է կացնում հաճախակի ցեխերում հետազոտություններ, արհեստանոցներում և ոժանդակ շենքերում հսկելով անվտանգության տեխնիկայի և արդյունաբերական սանիտարիայի դրության վրա։

բ) Կազմակերպում է բանվորների առաջարկների հավաք, անվտանգության տեխնիկայի և արդյունաբերական սանիտարիայի վերաբերյալ, տալիս է յեղած հարցերին բացատրություն և պատասխան։ Հավաքում է բողոքներ և դիմումներ, այդ նպատակի համար սահմանում է հերթապահության հատուկ օրեր և ժամեր, նախորդք հայտնելով բանվորությանը և համաձայնեցնելով աշխատանքի պաշտպանության բյուրոյի հետ։

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

8. Հասարակական տեսուչները իրենց ձեռնարկության սահմաններում իրավունք ունեն՝

ա) Հաճախել դիշերը և ցերեկ, հարմար ժամանակ, իրենց աշխատանքի ժամերից դուրս բոլոր ցեխերը, բաժինները, բացի այդ բակերս, ճաշարան, հանրակացարաններ և այլն։

բ) Պահանջել արտելի վարչությունից հատկացնելու աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գրքեր, փաստաթղթեր, պարզաբանություն և այլ տեղեկություններ։

գ) Տալիս է, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի որենքները խախտելու վերաբերյալ, գանձարկղի աշխատանքի պաշտպանության տեսուչի հետ նախորոք համաձայնեցրված պարտավորագիրը, որը արտելի վարչության նախագահին կամ նրա կողմից լիազորված անձնավորությունների համար պարտադիր է կատարելու։

դ) Արդկոոպզանձարկղի աշխատանքի տեսչի հետ համաձայնեցնելուց հետո, վարչությանը կանչում է պատասխանատվության Արդկոոպերացիային վերաբերող աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի կանոնների խախտման համար, հիմք ընդունելով ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1935 թվականի ապրիլի 17-ի որոշումը Արտկոոպերացիայի արտելային արհեստանոցների աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի վերաբերյալ գործող որենսդրությունը։

յե) Մասնակցել աշխատանքի պաշտպանության անվտանգության տեխնիկայի պլանները կազմելու աշխատանքներին։

9. Հասարակական տեսուչներն իրենց պարտականությունների կատարելը և իրավունքները իրագործելու համար, նրանց տրվում է, Գանձարկղի ստորագրությամբ և կնիքով անվանական բաց թերթիկ։

10. Հասարակական տեսուչների վոչ ճիշտ գործելու և վոչ ճիշտ վորոշումներ հանելու դեմ բողոքները ներ-

կայացվում են Գանձարկղվության աշխատանքի տեսուչին։

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

11. Ղեկավարությունը և հրահանգները հասարակական տեսուչներին տալիս է Արտկոոպգանձարկղը։

12. Արդկոոպգանձարկղն առնվազը մեկ անգամ յեռամսյակում, պարտավոր է հրավիրել բոլոր տեսուչների խորհրդակցություն. ծանոթացնելով նրանց աշխատանքի պաշտպանության նոր օրենքների և վորոշումների հետ ու ապահովելով նրանց համապատասխան գրականությամբ, հրահանգչական ցուցումներով։

13. Վերապատրաստման ու վերավորակավորման նպատակով, ըստ պահանջվելիք չափի Գանձարկղը, կազմակերպում է մասնագիտական դասընթացքներ, վորը պետք է գործի աշխատանքի ժամերից դուրս, առանց կտրելու արտադրական աշխատանքներից։

14. Հասարակական տեսուչները հաճախ տալիս են հաշվետվություն ԱՊՀԲ-ի, գանձարկղի (աշխատանքի պաշտպանության տեսուչին) և արտելի ընդհանուր ժողովում։

Հ 24280

Պատասխանատու՝ Ա. ԺԱՐՈՎ
Խմբագիր՝ Ի. ՍՏԱՆԿՈՎ
Տեխ. խմբագիր՝ Ա. ՍԱՎԱԼԻ
Սրբագրիչ՝ Բ. ԳԵՑԵԼԵՎԻՉ

[024.]
128
ЦЕНА
II
24280

ԼԵՆՏԵՂԱՐԴԻ ՏՊԱՐԱՆ Պ. 305 ՏԻՐ. 300 ՈՐ. ՔԱՂԼԻՏ 6437
1938 ԹԻՎ